002, Yerevan, Amiryan str. 23/1
+ 374 10 510 910
www.aeb.am

Հաճախ տրվող հարցեր

1.Ինչպե՞ս ակտիվացնել և օգտագործել AEB Mobile բջջային հավելվածը
1.1.Ներբեռնեք AEB Mobile բջջային հավելվածը: Այցելեք Բանկի ցանկացած մասնաճյուղ, լրացրեք Դիմում Հայտ, որից հետո Ձեր կողմից նշված էլ. հասցեին կուղարկվի 1-ին նամակը՝ AEB Mobile բջջային հավելվածի մուտքանունը և նախնական գաղտնաբառը, ապա կուղարկվի 2-րդ նամակը ակտիվացման կոդով և PIN կոդով:
1.2.Հաճախորդն իր էլեկտրոնային հասցեին ուղարկված մուտքանունով և ակտիվացման կոդով գրանցվում է AEB Mobile բջջային հավելվածում, բարեհաջող գրանցումից հետո հաճախորդի մուտքանունը լրացվում է ավտոմատ կերպով, ապա հաճախորդը 1-ին նամակով ուղարկված նախնական գաղտնաբառը մուտքագրելուց հետո պետք է 2-րդ նամակի PIN կոդը մուտքագրի:

2.Բջջային հեռախոսի վնասման, կորստի, PIN կոդը մոռանալու կամ նոր բջջային հեռախոսի ձեռք բերման դեպքում ինչպե՞ս ակտիվացնել նոր ներբեռնած AEB Mobile բջջային հավելվածը:

Կարող եք այցելել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ ձեր կողմից բանկին տրամադրած էլ. հասցեից գրել փոփոխման էլեկտրոնային դիմում, որից հետո Բանկի աշխատակիցը կապ կհաստատի Ձեզ հետ՝ Ձեր կողմից դիմումի ուղարկման հաստատումը ստանալու նպատակով:

3.Համակարգում գրանցվելիս ստանում եմ հետևյալ հաղորդագրությունը. «Գրանցումը ձախողվեցե: Ի՞նչ է սա:
Խնդրում ենք ստուգել համակարգում Ձեր մուտքագրած կոդի համապատասխանությունը Բանկի կողմից տրամադրված գրանցման կոդին: Նշված հաղորդագրությունը ստացվում է այն դեպքում, եթե համակարգ մուտքագրած կոդը տարբերվում է Բանկի կողմից տրամադրված կոդից: Եթե Ձեր մուտքագրած կոդը համապատասխանում է Բանկի կողմից տրամադրված կոդին, սակայն Դուք շարունակում եք ստանալ նշված հաղորդագրությունը, խնդրում ենք կապնվել Բանկի հաճախորդների աջակցման ստորաբաժանման հետ կամ այցելել Բանկի ցանկացած մասնաճյուղ:

4.Համակարգում գրանցվելիս ստանում եմ հետևյալ հաղորդագրությունը. «Կապի ձախողում: Խնդրում ենք ստուգել ինտերնետ կապի առկայությունը:ե Ի՞նչ է սա նշանակում:
Խնդրում ենք ստուգել Ձեր բջջային հեռախոսի ինտերնետային կապը: Եթե Ձեր բջջային հեռախոսը միացված չէ ինտերնետին, խնդրում ենք հեռախոսը միացրե՛ք ինտերնետին և կրկնե՛ք ակտիվացման գործընթացը: